# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հուլիսի 10-ի թիվ 2.2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2026/01**

**«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքավորման** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2026/01** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի հուլիսի 10-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2026 թվականի հուլիսի 10-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N1**՝ Տեղեկացնում ենք ձեզ, որ տեխնիկական բնութագրում ներկայացված որոշ արժեքներ արտադրողների մոտ ենթարկվել են փոփոխությունների: Արտադրողների, նրանց ներկայացուցիչների կայքերում առկա տեղեկատվությունն այդ չափանիշների արժեքների մասով ժամկետանց է և չի համապատասխանում իրականում արտադրվող սարքերին: Մասնավորապես՝

• Սառեցման մեկնարկային ջերմաստիճանը. պահանջվում է սկսած +20 C$-ից, իսկ արտադրվում է սկսած +15 C:

• Սառեցման վերջնական ջերմաստիճանը և ժամանակը. պահանջվում է հասնել -50.0 C ջերմաստիճանի 5 ժամում, իսկ արատադրվում է մինչև -45C 4.6 ժամում:

• Սառեցման փուլում պահման ժամանակը. պահանջվում է ցիկլը պահել 3 ժամ, առաջարկվում է 2.6 ժամ:

• Հալեցման վերջնական ջերմաստիճանը. պահանջվում է տաքացնել մինչև +20.0 C, առաջարկվում նշված է +15.0 C:

Խնդրում ենք ուսումնասիրել և հաշվի առնել ներքևում ներկայացված ակտուալ տեխնիկական բնութագրերը: Խնդրում ենք նաև պարզաբանել, ընդունելի՞ են ներկայացված փոփոխությունները:

**Պարզաբանում՝ N1 ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2026/01** ծածկագրով մրցույթի հրավերի բետոնե մայթային սալիկների ցրտադիմացկունության որոշման խցիկի տեխնիկական բնութագիրը կազմվել է գործող ԳՕՍՏ 17608-2017 (EN 1338:2004, NEQ) ստանդարտի հիման վրա և ի րականացված ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ վերոնշյալ տեխնիկական բնութագրերին համապատասխանող սառեցման խցիկներ առկա են շուկայում:

Համաձայն նշված ստանդարտի՝

• Սառեցման խցիկը պետք է ապահովի օդի ջերմաստիճանի հասնումը և կայուն պահպանումը՝ -50±5°C-ից մինչև +20±0,5°C միջակայքում, իսկ նմուշների փորձարկման ջերմաստիճանային ռեժիմը պետք է լինի հետևյալը.

• Նատրիումի քլորիդի (NaCl) լուծույթի ջերմաստիճանի իջեցում մինչև -50±5°C՝ 5,0 ± 0,5 ժամ տևողությամբ:

• Պահում նատրիումի քլորիդի (NaCl) լուծույթում -50±5°C ջերմաստիճանում՝ 3,0 ± 0,5 ժամ տևողությամբ:

• Հալեցում մինչև նատրիումի քլորիդի (NaCl) լուծույթի +20±0,5°C ջերմաստիճանը՝ 16,0 ± 0,5 ժամ տևողությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նորմատիվ ստանդարտի պահանջներին համապատասխան սառեցման խցիկի աշխատանքային ջերմաստիճանը պետք է լինի հստակ **-50°C,** աշխատանքի ժամանակ՝ ±5°C թույլատրելի շեղմամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2026/01** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Արմինե Շալունցին**:

***Հեռախոս՝ 010 54 21 76***
***Էլ. Փոստ՝*** *procurement@armroad.am*
***Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ***